

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՅՈՒՆԻՄԵՂ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

18.05.2014

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանն աշխատանքային այցով եղել է Աբովյան քաղաքում գործող <<Յունիմեդ>> բժշկական կենտրոնում:

Բժշկական կենտրոնում Կոտայքի մարզպետը ծանոթացել է առողջապահական գործունեության հիմնական մանրամասներին, մատուցվող ծառայությունների ցանկին, ինչպես նաև ընկերության բաժանմունքների ու համապատասխան կաբինետների գործունեությանը, որոնք հիմնականում իրենց մեջ ներառում են ինչպես լաբորատոր-ախտորոշիչ, այնպես էլ գինեկոլոգիական, ուրոլոգիական, սրտաբանական և այլ ուղղություններ: Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանի աշխատանքային այցի շրջանակներում կազմակերպվել է նաև գործնական քննարկում:

Ախտորոշման և բուժման գործընթացներում կարևորելով որակյալ լաբորատոր ծառայությունների նշանակությունը՝ Կոտայքի մարզպետն անդրադարձել է պետական և մասնավոր առողջապահական հաստատությունների միջև փոխհամագործակցության ուղիների մշակման կարևորություններին, որոնք կստղծեն մարզի ազգաբնակչությանը մատուցվող բուժօժանություններին նոր որակների և նոր մոտեցումների հաղորդման հնարավորություններ:

ՀՀ Կոտայքի մարզպետ Ա. Հարությունյանի հետ հանդիպման շրջանակներում <<Յունիմեդ>> բժշկական կենտրոնի պատասխանատուները ներկայացրել են նաև մարզի այլ տարածաշրջաններում գործունեություն ծավալելու և բնակիչների համար առավել հարմարավետ ծառայություններ մատուցելու հեռանկարային առաջարկությունները: